

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«.....» «.....» 2019թ. N.....-Ն

**«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N689-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ և 64-րդ հոդվածները, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետը և 24-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ և 36-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ.Անհաղթի փող. 23, պետական գրանցման համարը՝ 286.210.04494) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Զաքիյան փող. թիվ 10, պետական գրանցման համարը՝ 222.210.00408):

2. «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

3. Սահմանել, որ՝

1) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հանդիսանալու է «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը և վերջինիս իրավունքներն ու պարտականությունները նրան են անցնում փոխանցման ակտին համապատասխան,

2) «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին,

3) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական առարկան է՝

պետական սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման աշխատանքների իրականացումը,

պետական սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման աշխատանքների իրականացումը,

պետական սեփականություն հանդիսացող գույքի պահառության աշխատանքների կազմակերպումը, ներառյալ՝ այդ գույքի տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացումը,

պետական սեփականություն հանդիսացող գույքի և գույքային իրավունքների արժեքի որոշումը (գնահատում և վերագնահատում),

պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի չափագրումը, սպասարկումն ու շահագործումը,

պետական սեփականություն հանդիսացող գույքի, գույքային իրավունքների, առևտրային կազմակերպություններում ունեցած բաժնեմասերի ու բաժնետոմսերի օտարման և մասնավորեցման հրապարակային սակարկությունների կազմակերպումը,

4) «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակն է՝

պետական սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ հավաստի տեղեկությունների (ներառյալ՝ արժեքը) ստացման (հավաքագրման) և պահպանման ապահովումը,

պետական սեփականություն հանդիսացող գույքի շրջանառության հետ կապված գործարքների արդյունավետության բարձրացումը,

պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի արդյունավետ շահագործման պայմանների ապահովումը»:

4. Թույլատրել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝ գույքագրում,

անշարժ գույքի չափագրում,

գույքի արժեքի որոշում,

անշարժ գույքի շահագործման և սպասարկման ծառայությունների մատուցում,

տեղեկատվության ու խորհրդատվության տրամադրում,

գույքի (ներառյալ՝ ապրանքներն ու նյութերը), գույքային իրավունքների, աշխատանքների ու ծառայությունների, արժեթղթերի (ներառյալ՝ բաժնետոմսերը), կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմասերի հրապարակային սակարկությունների կազմակերպում ու իրականացում»:

5. Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում՝

1) ապահովել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող՝ «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը,

2) հաստատել միացման պայմանագիրը և փոխանցման ակտը,

3) ապահովել «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվանափոխությունը, ինչպես նաև «Գույքի

գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ սույն որոշումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը,

4) «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 2005 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ քաղաք Երևան, Դավիթ Անհաղթ 23 հասցեում գտնվող ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիրը լուծելու մասին համաձայնագիր՝ սահմանելով, որ դրա նոտարական վավերացման և գույքային իրավունքների դադարման ծախսերն իրականացվելու են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին,

5) ապահովել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների պետական գրանցումը,

6) ապահովել «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցումը:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի «Շահագործման տնտեսություն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը և «Ընկերությունների աջակցման և պետական գույքի գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միաձուլման ձևով վերակազմակերպելու մասին» N689-Ն որոշման (այսուհետ՝ «Որոշում») մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման 2-րդ կետում «3-րդ հարկի 216.9 քառ. մետր և 4-րդ հարկի 364 քառ. մետր» բառերը փոխարինել «3-րդ հարկի 214.33 քառ. մետր և 4-րդ հարկի 285.48 քառ. մետր» բառերով,

2) ուժը կորցրած ճանաչել Որոշման 3-րդ և 4-րդ կետերը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑՄԱՆ ՁԵՎՈՎ
ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԳՈՐԾԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ
ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N689-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Անհրաժեշտությունը, ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացնում է պետական գույքի օտարման, մասնավորեցման, ինչպես նաև վարձակալության տրամադրման նպատակով աճուրդների կազմակերպումը:

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի միացման ճանապարհով վերակազմակերպումը և արդյունքում գործունեության նրա դադարեցումը պայմանավորված է պետական գույքի կառավարման բնագավառում իրականացվող բարեփոխումներով, մասնավորապես՝ 2019թ. առաջին կիսամյակի ընթացքում պետական գույքի վաճառքի և վարձակալության էլեկտրոնային աճուրդի ներդրման պահանջով, ինչպես նաև միևնույն գործառույթն իրականացնող առանձնացված ստորաբաժանումների օպտիմալացման անհրաժեշտությամբ:

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի վերակազմակերպմամբ նախատեսվում է վերջինիս իրավունքներն ու պարտականությունները փոխանցել Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ին: Միացման նպատակը երկու կազմակերպությունների ռեսուրսների (կադրային, ֆինանսական և գույքային) արդյունավետ տնօրինումն է:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ն էլ նախատեսվում է վերանվանել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ:

Արդյունքում, հաջորդ տարվանից սկսած կտնտեսվի «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին ՀՀ պետական բյուջեից տարեկան տրամադրվող 30837.5 հազար դրամ գումար: Միաժամանակ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին նշված գործառույթների փոխանցումը ոչ միայն չի պահանջելու ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ գումարի հատկացում, այլ ընդհակառակը նոր գործառույթի՝ շինությունների և հողամասերի չափագրման և հատակագծերի կազմման ծառայությունների իրականացման արդյունքում կտնտեսվի ևս լրացուցիչ գումար: Օպտիմալացման արդյունքում նախատեսվում է նաև «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական գնումների գործընթացին մասնակից դարձնելու միջոցով՝ էլեկտրոնային աճուրդի իրականացման, գնահատման և չափագրման ծառայություններ մատուցել նաև պետական այլ գերատեսչություններին, ինչպես նաև մասնավոր հատվածին, ինչը նախկինում չի իրականացվել:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների միացմամբ պայմանավորված նախատեսվում է նաև սույն որոշմամբ փոփոխությունների ենթարկել վերակազմակերպված

կազմակերպության հիմնական առարկան և նպատակները, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության տեսակները: Հիմնական առարկայի մեջ նշված հասկացություններից՝

- «գույքի առանձին տեսակներ» հասկացությունը վերաբերվում է պետական սեփականություն հանդիսացող՝ ինչպես մինչև հինգ միլիոն դրամ գնահատված արժեքով՝ օտարման գործընթացում գտնվող այն շարժական գույքին, որը ներկայում ենթակա է պահառության, այնպես էլ շարժական գույքի այն (հավանական) տեսակներին, որոնք ապագայում կայացվող իրավական ակտերով ևս կարող են դասվել պահառության ենթակա գույքի շարքին,

- «պետական անշարժ գույքի առանձին տեսակներ» հասկացությունը վերաբերվում է պետական սեփականություն հանդիսացող այն անշարժ գույքին (շենքեր, շինություններ, հողամասեր և այլն), որոնց սպասարկումը (ամբողջական կամ մասնակի շահագործումը) իրավական ակտերով վերապահված է (հանձնարարված է) «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը,

- «գույքի որոշ տեսակներ» հասկացությունը վերաբերվում է պետական սեփականություն հանդիսացող՝ պահպանման անհրաժեշտություն ունեցող և որևէ ձևով չօգտագործվող գույքին:

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի հետ 15.01.2018թ. կնքված N 03/0018 ոչ բնակելի տարածքի անհատույց, անժամկետ օգտագործման պայմանագրի՝ նոր չափագրման և մակերեսների ճշտման արդյունքում կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Զաքյան 10 հասցեում գտնվող վարչական շենքից 499.81 քառ.մետր ընդհանուր մակերեսով տարածք, որից՝ 3-րդ հարկից 214.33 ք.մ և 4-րդ հարկից 285.48 ք.մ: Սույնով պայմանավորված նախատեսվում է Նախագծով փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 13.05.2004թ. թիվ 689-Ն որոշման մեջ:

2. Կարգավորման նպատակը և բնույթը

«Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործառույթներն իրականացնել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով և տնտեսել պետական բյուջեից տրամադրվող գումար:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունումով ակնկալվում է գործառույթների հստակեցում և կրկնությունների բացառում, որի արդյունքում պետական բյուջեում տարեկան կտնտեսվի 30837.5 հազար դրամ:

4. Նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնի:

5. Իրավական ակտերի ցանկ, որոնց հիման վրա մշակվել է իրավական ակտի նախագիծը՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքը,

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք,

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք:

6. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից կողմից:

Համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՀՀ արդարադատության նախարարության հետ, տեղադրվել է e-draft.am կայքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպելու, «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N689-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կապակցությամբ շահագրգիռ գերատեսչությունների առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
<p align="center">ՀՀ արդարադատության նախարարություն N01/27.2/13114-2019</p>	<p>Նախագծի ամբողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարար» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար» բառերով:</p>	<p align="center">Ընդունվել է</p>	<p>Հաշվի առնելով Կառավարության կառուցվածքի փոփոխությունները, Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
	<p>Նախագծի 6-րդ կետից հանել «և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պետին» և «համատեղ» բառերը, քանի որ հիշյալ կետի հանձնարարականը պետք է վերաբերի ՀՀ էկոնոմիկայի նախարարին:</p>	<p align="center">Ընդունվել է</p>	<p>Նախագծի 6-րդ կետը հանվել է և համարակալումը փոխվել է:</p>
<p align="center">ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն N01/21/7375-19</p>	<p align="center">Առարկություններ չկան:</p>		

ՀՀ Ֆինանսների նախարարություն
N01/8-2/5185-2019

Նախագծում նշված պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետագա կարգավիճակի կարգավորման հարցը քննարկելիս անհրաժեշտ է հիմք ընդունել ՀՀ Վարչապետի 07.02.2019թ. N02/16.8/5096-2019 հանձնարարականի «Թեմատիկ ամփոփագրի» դրույթները: Մասնավորապես՝ ՊՈԱԿ հիմնադրվում է այն դեպքում, երբ պետության, համայնքի կամ ուղղակիորեն հասարակության (կամ նրա առանձին խմբի) կարիքների համար պետք է կազմակերպվեն ծառայություններ, որոնք հիմնադիրը ճանաչել է որպես ոչ առևտրային այն հիմնավորմամբ, որ.

Առևտրային այլընտրանքը բացակայում է (բայց ոչ այն դեպքում, երբ առևտրային այլընտրանքը բացակայում է հիմնադրի գործողության պատճառով),

կոնկրետ ծառայությունը համարվում է բացառապես հիմնադրի մենաշնորհի և առևտրային այլընտրանքի առաջանալը գնահատվում է աննպատակահարմար,

այդ ծառայությունները չեն կարող կամ նպատակահարմար չի կազմակերպել հիմնադրի աշխատակազմի ստորաբաժանումների միջոցով:

Ընդ որում, հիմնադրի որոշմամբ սահմանվում է, որ ՊՈԱԿ-ը կոնկրետ վերոնշյալ ծառայություններից տարբերվող այլ վճարովի ծառայություններ չի կարող մատուցել և չի կարող շահույթ հետապնդել:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» և «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրության դրույթները (մասնավորապես՝ պետական գույքի գույքագրման աշխատանքների իրականացումը, ՀՀ պետական գույքի

Չի ընդունվել

«Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ը հիմնադրվել է պետական գույքի կառավարման ոլորտում պետության և հասարակության առանձին խմբերի կարիքների բավարարման և պետական գույքի գույքագրման, գնահատման, սպասարկման ծառայությունների մատուցումը կազմակերպելու ու ապահովելու համար: ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) պահպանման անհրաժեշտությունը Պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հիմնավորում է ելնելով ՀՀ վարչապետի 07.02.2019թ.-ի թիվ 12/168/5096-2019 հանձնարարականի «թեմատիկ ամփոփագրի» դրույթներից, մասնավորապես, ՊՈԱԿ-ի կողմից պետական գույքի կառավարման ոլորտում մատուցվող ծառայություններն իրենց բարձր արդյունավետության և համեմատաբար նվազագույն ծախսատարության մակարդակով համարվում են առանձնահատուկ և առևտրային այլընտրանքի առաջանալը, համեմատական տեսանկյունից, գնահատվում է ոչ նպատակահարմար: Բացի դրանից նշված ծառայությունների (բացառությամբ հաշվառման) վերապահումը որպես գործառույթ Կոմիտեի ստորաբաժանումներին չի ապահովվի ծառայությունների ժամանակին, ամբողջ ծավալով ու պատշաճ մակարդակով իրականացումը: Այսպես, օրինակ, ՊՈԱԿ-ը գնահատման բնագավառում Կոմիտեի պատվերների հիման վրա այսօր իրականացնում է և նախատեսվում է ապագայում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- մասնավորեցման և օտարման առաջարկվող յուրաքանչյուր պետական գույքի շուկայական գնահատում,

- Կոմիտեի հաշվեկշռում արտացոլման ենթակա գույքի շուկայական գնահատում,

- պետական գույքի կառավարման մշակվող ռազմավարության համաձայն կոնկրետ ժամանակահատվածի կտրվածքով նախատեսվում է իրականացնել մասնավորեցման ծրագրում ընդգրկված բոլոր ընկերությունների և օտարման ենթակա բոլոր գույքի գնահատում:

	<p>հաշվառումը, պետական գույքի արժեքի որոշումը և այլն), կարող են իրականացվել նաև մասնավոր կազմակերպությունների կողմից, ուստի առաջարկում ենք քննարկել ՊՈԱԿ-ների՝ պետական մարմինն բնորոշ գործառնությունները ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կամ պետական գույքի կառավարման կոմիտեի միջոցով իրականացնելու, իսկ ծառայություններ մատուցելու հետ կապված գործառնությունները՝ կոմիտեի կամ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից մրցակցային եղանակով ձեռք բերելու և արդյունքում՝ ՊՈԱԿ-ները լուծարելու հարցը:</p> <p>ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի 31.10.2018թ. N 01/16.11/6303-18 գրությամբ նշվել էր, որ 2019 թվականի առաջին կիսամյակի ավարտին, նախատեսվում է լուծարել «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը և էլեկտրոնային աճուրդով գույքի վաճառքն իրականացնել Պետական գույքի կառավարման կոմիտեի համապատասխան ստորաբաժանման միջոցով:</p>		<p>Գնահատման բնագավառում մատուցված ծառայությունների դիմաց ՊՈԱԿ-ը ներկայումս որպես փոխհատուցում ստանում է միայն մասնավորեցված և օտարված գույքի համար, մնացած վերը թվարկված դեպքերում (նկատի ունենք չմասնավորեցված և չօտարված գույքի գնահատումը, ինչպես նաև հաշվեկշռում արտացոլման համար գնահատումը) կատարված աշխատանքների համար փոխհատուցում չի ստանում և ապագայում ամբողջական գնահատում կատարելու դեպքում նույնպես փոխհատուցում չի ստանալու: Նշվածից հետևում է, որ այլընտրանքի դեպքում էականորեն ավելանալու են պետական բյուջեից գնահատման համար հատկացվող գումարները: Այդ գումարները չհատկացվելու դեպքում բնական է, որ անհրաժեշտ աշխատանքները նույն ծավալով չեն կատարվելու և Կոմիտեի առջև դրված խնդիրները չեն լուծվելու:</p> <p>ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող սպասարկման ծառայություններն իրենց կազմում ընդգրկում են ոչ միայն սպասարկվող շենք, շինությունների ընդհանուր օգտագործման տարածքների մաքրության ապահովումը, այլ նաև ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և վերելակների անխափան աշխատանքի ապահովումը, շենքի պահպանությունը, անվտանգության ծառայության կազմակերպումը, ընթացիկ վերանորոգումը և այլն: Ընդ որում, նշված ծառայությունների մատուցման համար սահմանված է նվազագույն վճար, որը ապահովում է միայն կատարված ծախսերի փոխհատուցումը:</p> <p>Ներկայումս ելնելով նվազագույն սպասարկման վճարի սահմանված մեծությունից բազմաթիվ օգտագործողների հետ կնքված են տարբեր ժամկետներով սպասարկման պայմանագրեր: Այլընտրանքի դեպքում, ենթադրելի է, որ սպասարկում իրականացնող անձը միայն իր կողմից կատարված ծախսերը փոխհատուցելու պայմանով սպասարկում չի իրականացնի: Արդյունքում առաջանալու է սպասարկման վճարի բարձրացման անհրաժեշտություն իր</p>
--	---	--	--

	<p>իրականացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր, ինչպես նաև համեմատական վերլուծություններ:</p> <p>2. Միաժամանակ Նախագծի ընդունումը նպատակահարմար համարվելու դեպքում առաջարկում ենք հետևյալը.</p> <p>ա) Նախագծի 4-րդ կետով Կազմակերպությանը թույլատրվում է իրականացնել անշարժ գույքի ու շարժական գույքի պահառության ձեռնարկատիրական գործունեություն:</p> <p>Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Նախագծի հիմնավորումներով չեն ներկայացվել նշված ձեռնարկատիրական գործունեությունը թույլատրելու նպատակահարմարության վերաբերյալ հիմնավորումներ: Ավելին Պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) շարժական գույքի պահառության վերաբերյալ «ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1033 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հիմնավորումներում (հավանության է արժանացել ՀՀ կառավարության 20.06.2019թ. N 778-Ն որոշմամբ), ներկայացրել էր տրամադճորեն հակառակ հիմնավորումներ: Մասնավորապես հիշյալ նախագծով առաջարկվում էր սահմանել, որ շարժական գույքի պահառության աշխատանքները որոնք կազմակերպվում են վերակազմակերպվող «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից իրականացվելու են միայն Կոմիտեի արտաբյուջետային միջոցներից կազմակերպությանը տրամադրվող</p>	<p>Ընդունվել է մասնակի</p> <p>Ընդունվել է</p>	<p>գույքի արդյունավետ կառավարմանը:</p> <p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	--	---	---

	<p>դրամաշնորհի հաշվին («Ֆինանսների նախարարությունը նշված առաջարկությանը ներկայացրել է բացասական կարծիք): Ընդ որում Որոշման մեջ սահմանված էր, որ նշված աշխատանքները կարող են իրականացվել նաև ՊՈԱԿ-ի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացած եկամուտների հաշվին: Շարժական գույքի պահառության աշխատանքները միայն արտաբյուջետային միջոցներից ՊՈԱԿ-ին տրամադրվող դրամաշնորհի հաշվին իրականացնելու հարցը Կոմիտեի կողմից հիմնավորվում էր հետևյալ հանգամանքով.</p> <p>Որոշումը 2015 թվականին ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու ժամանակ նախատեսվում էր պահառության տարածքում ստեղծել պայմաններ ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկատիրական գործունեություն (մասնավոր հատվածի շարժական գույքի պահառություն) իրականացնելու և դրանից ստացված եկամուտների հաշվին պետական գույքի պահառության ծրագրի պետական ֆինանսավորումը նվազեցնելու համար: Սակայն այդ ուղղությամբ տարիներ շարունակ և՛ Կոմիտեի և՛ ՊՈԱԿ կողմից ձեռնարկած քայլերը հաջողություն չբերեցին, քանի որ այդ տարածքի նկատմամբ մասնավոր հատվածի հետաքրքրությունն այդպես էլ չառաջացավ (մեծապես՝ այդ տարածքի հեռավորության և քաղաքի հասարակական տրանսպորտի կանոնավոր երթուղիների բացակայության պատճառներով):</p> <p>Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ Նախագծի 4-րդ կետով Կազմակերպությանը անշարժ ու շարժական գույքի պահառության ձեռնարկատիրական գործունեություն նախատեսող առաջարկությունը գտնում ենք</p>		
--	--	--	--

	<p>չհիմնավորված և առաջարկում ենք այն հանել Նախագծից:</p> <p>բ) Նախագծի 3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, Կազմակերպության գործունեության հիմնական առարկան է պետական սեփականություն հանդիսացող գույքի առանձին տեսակների պահառության աշխատանքների կազմակերպումը, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի առանձին տեսակների սպասարկումն ու շահագործումը, իսկ նպատակն է պետական սեփականություն հանդիսացող գույքի որոշ տեսակների ամբողջականության ու դրա տեխնիկական վիճակի պահպանման ապահովումը:</p> <p>Այս կապակցությամբ մեր 28.03.2019թ. N 01/8-2/5185-2019 գրությամբ առաջարկել էինք «գույքի առանձին տեսակների», «գույքի որոշ տեսակների», «անշարժ գույքի որոշ տեսակների» հասկացությունները հստակեցնել, քանի որ դրանք անորոշ են: Այդ հասկացությունների վերաբերյալ Նախագծի հիմնավորումներով տրվել են որոշ մեկնաբանություններ, սակայն Նախագծում դրանք տեղ չեն գտել: Հետևաբար հաշվի առնելով, որ Նախագծի հիմնավորումները որոշում չեն դառնում, ուստի նպատակահարմար է նշված արտահայտությունները հստակեցնել Նախագծի մեջ, հետագայում տարընթերցումներից խուսափելու համար:</p> <p>Բացի այդ առաջարկում ենք հստակեցնել, թե ինչ է նշանակում «պետական սեփականություն հանդիսացող գույքի որոշ տեսակների ամբողջականության ու դրա տեխնիկական վիճակի պահպանման</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
--	--	---------------------------	--

	<p>ապահովումը» արտահայտությունը, քանի որ պարզ չէ, թե որ գույքի, շարժական, թե անշարժ գույքի մասին է խոսքը: Ընդ որում Նախագիծը նման ձևակերպումով հաստատվելուց հետո, անշարժ գույքի դեպքում կարող են առաջանալ ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցներ հատկացնելու ռիսկեր: Հետևաբար այդ ձևակերպմանը չենք առարկում, եթե այն ՀՀ պետական բյուջեից անշարժ գույքի պահառության գծով չի առաջացնի միջոցների հատկացման անհրաժեշտություն, ինչպես նաև չի հանգեցնի անշարժ գույքի օտարումից մուտքերի նվազեցման, հակառակ պարագայում առաջարկում ենք Նախագծից հանել այն: Ավելին հաշվի առնելով, որ Կազմակերպությանը թույլատրվում է իրականացնել նաև չափազրման գծով ձեռնարկատիրական գործունեություն, ուստի այդ ձևակերպումը Նախագծում նման խմբագրությամբ պահպանելու, ինչպես նաև չափազրման ձեռնարկատիրական գործունեության անհրաժեշտությունը հիմնավորվելու դեպքում առաջարկում ենք Նախագծում ամրագրել, որ այդ աշխատանքներն իրականացվելու են Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից առաջացող միջոցների հաշվին:</p> <p>գ) Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության՝ ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, եթե դա նախատեսված է օրենքով: Հետևաբար, հաշվի առնելով ՊՈԱԿ-ի հիմնական գործառույթներն ու նպատակները՝ առաջարկում ենք ևս մեկ անգամ</p>	<p>Չեն ընդունվել</p>	<p>Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառվող կամ նոր հանձնվող անշարժ գույքն արդյունավետ տնօրինելու հետ կապված հաճախ անհրաժեշտություն է առաջանում սեղմ ժամկետում իրականացնել չափազրում: Նշված աշխատանքների իրականացումը գնումների գործընթացով ժամանակատար է և հնարավորություն չի ընձեռնում ծագած խնդիրներին հրատապ լուծում տալուն: Այդ աշխատանքների պատվիրակումը ՊՈԱԿ-ին</p>
--	--	-----------------------------	---

	<p>քննարկել Նախագծի 4-րդ կետի 2-րդ ենթակետում նշված՝ «անշարժ գույքի չափագրում» ձեռնարկատիրական գործունեության տեսակը տվյալ ՊՈԱԿ-ի կողմից իրականացնելու նպատակահարմարությունը:</p> <p>դ) Անհրաժեշտ է նաև Նախագծում նախատեսել դրույթներ՝ ՊՈԱԿ-ի սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի ու արժեքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 29.01.2002թ. N72 որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:</p>	<p>Չեն ընդունվել</p>	<p>հնարավորություն կընձեռնի դրանք իրականացնելու սեղմ ժամկետում և նվազագույն ծախսերով:</p> <p>Որոշման նախագծով նոր իրավաբանական անձ չի ստեղծվում, իսկ նրանց ամրացված գույքի կազմը սահմանված է ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով:</p> <p>ՀՀ կառավարության 29.10.2002թ. N72 որոշումը վերաբերվում է «Աճուրդի կենտրոն» պետական հիմնարկը «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելուն, որն արդեն իսկ կատարված է և այն նպատակահարմար չէ ուժը կորցրած ճանաչել:</p>
<p>ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչություն</p>	<p>Նախագծով նախատեսվում է «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, ինչպես նաև վերջինս վերանվանել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:</p> <p>Նշված փոփոխության հետագա իրացվելիությունն ապահովվում է ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի թիվ 689-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով, ինչը խնդրահարույց է, քանի որ Նախագծով մայր որոշման վերնագրում, ինչպես նաև 1-ին և 2-րդ կետերում փոփոխություններ չեն կատարվում:</p> <p>Այս առումով, առաջարկում ենք քննարկել վերոնշյալ որոշման մեջ փոփոխություն կատարելու միջոցով վերակազմակերպման</p>	<p>Ընդունվել է</p>	<p>«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության հիմնական առարկան, նպատակները և ձեռնարկատիրական գործունեության տեսակները սահմանվում են սույն որոշման նախագծով՝ ուժը կորցրած ճանաչելով ՀՀ կառավարության 13.05.2004թ. թիվ 689-Ն որոշման 3-րդ և 4-րդ կետերը:</p>

	հետագա ընթացքն ամբողջացնելու նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցի լուծման տարբերակ կարող է հանդիսանալ միայն նոր որոշման նախագծի ընդունումը՝ առանց անդրադառնալու ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի թիվ 689-Ն որոշմանը:		
Նախագիծը տեղադրվել է e-draft.am կայքում	Առաջարկություններ չկան		